Գուրգեն Մահարի

Ծաղկած փշալարեր

11

Օրը մոտենում էր իր վախճանին:

Ձմեռային վաղ օրամուտի ստվերները դուրս սողացին բրուտանոցի խոնավ անկյուններից, սառցակալած ապակիները կապտեցին, ու լռեցին անիվները: Գերմանուհին ավարտեց իր աշխատանքը, և Մամոյի գլուխը բազմեց Չայկովսկու կողքին: Այսպես էլ է պատահում:

— Մաեստրո, — դիմեց նա Աշոտ դայուն, — խնդրում եմ թրծելիս . . . ուշադիր եղեք . . .

Աշոտ դային, որպես պատասխան, միայն գլուխը շարժեց, այդ նշանակում էր՝ մի՛ մտահոգվեք, ամեն ինչ լավ կլինի: Ցնցող, արտակարգ ոչինչ չասաց գերմանուհին, բայց տարօրինակ կերպով ազդեց ինձ վրա նրա պատվերը . նրա մեջ, չգիտեմ ինչու, ես զգացի հեռու ճանապարհի գնացողի կամ գուցե անդարձ հեռացողի ցավագին, բայց գործնական շեշտը:

Մամոն անխոս կոացավ, հանեց Լյուդմիլայի ոտից կերզե ոտնամանը, դրեց թևի տակ ու գնաց: Քիչ անց նա վերադարձավ նորոգված թաղիքե ոտնամանը ձեռքին, օգնեց, հագցրեց, և թեթևացած շունչ քաշեց:

— Խառաշո՞, — հարցրեց նա:

Յատուկ Պոէմ

— Очень хорошо, очень спасибо, — պատասխանեց գերմանուհին և չորանոց մտավ:

Դա՛նգ-դա՛նգ, խուլ հնչեց բանթողի գոնգը, ու մենք դուրս եկանք բրուտանոցից անորոշ, անբացատրելի տխրությամբ:

Ճանապարհին ես իմ միտքն զբաղեցրի առաջին ճամբարային կետում ապաստանած հայ ուսուցիչ Կարապետյանով: Օրեր առաջ Աշոտ դային ի միջի այլոց ասաց, որ կարելի է խոսել կարգադրիչի հետ, որ մի օրով ինձ ուղարկեն Առաջին ճամբար, որևէ գործով: Երբեմն մեր ճամբարից ուղարկվում էին կալանավորներ՝ գրասենյակային աշխատողների հետ՝ այս կամ այն աշխատանքը կատարելու համար: Սակայն այդպիսիները բացառապես արհեստավորներ էին, որոնցից զուրկ էր Առաջինը: Ինձ ինչո՞ւ պիտի ուղարկեն: Երբ ես հայտնեցի իմ կասկածները Աշոտ դայուն, նա ասաց, որ Սիդորովից է կախված, մի արհեստավորի հետ կուղարկի քեզ՝ ասենք, որպես տեխնիկական աշխատող կամ նման մի բան: Այդ խելքի մոտ է: Ասացինք, խոսեցինք ու մոռացանք: Չէ՛, պետք է Աշոտ դայուն հիշեցնել իր խոստումը: Գուցե այնտեղ ուրիշ հայեր էլ կան, ինչո՞ւ չգնալ, չտեսնել:

Քամի չկա այսօր, ոչ հրող, ոչ հանդիպակաց: Դրա փոխարեն մեր ոտների տակ ասես ճարճատում է սառնամանիքը: Լինում է մի պահ, երբ ես զգում եմ ինձ ոտից-գլուխ սառած, ասես շարժվող, բամբակած շորեր հագած սառցամարդ: Այնուհետև թվում է, որ եթե ինձ այս դրության մեջ կանգնեցնեին շիկացած վառարանի մոտ, ես ձյունի նման կհալվեմ, և ինձնից կմնան միայն իմ թաց շորերը, այո, իմ թաց շորերը և ուրիշ ոչինչ:

Կար ժամանակ, երբ հայերն ավելի շատ էին մեր ճամբարում: Նրանցից ավելի առողջներին ընտրեցին ու տարան ծանր աշխատանքային ճամբարներ՝ անտառ կտրելու: Նրանցից մեկը ետ եկավ, որի համար շատ թանկ վճարեց: Դա թիֆլիսցի հայ-հրեա Զինգանն էր, որին մենք Զինգո էինք ասում . նա հայի նման սահուն հայերեն էր խոսում, վրացու նման՝ վրացերեն և տիրապետում էր ինչպես բարբառային, այնպես էլ դասական հրեերենին: Նրան նստեցրել էին քաղաքական գործով (ԱՍՍՀ — այսինքն անտիսովետական ագիտացիա . . .), բայց նա համառորեն հերքում էր այդ իրողությունը .

— Ես ի՞նչ «ԱՍԱ» եմ, ես ջիգա՛ն եմ, ջիգա՛ն . . .

Ջիգանները քրեական չափխուներն էին: Նրանց խորթ չէին ինչպես «չոր», այնպես էլ «թաց» հանցագործությունները:

Ջինգանը կարճահասակ, կոճղի նման ամուր, մեծ գլխով և ծաղկատար դեմքով երիտասարդ էր: Հիանալի սուլում էր, սուլելով երգում: «Սուլիկո» էր երգում նա, ինչ-որ էլի երգեր, իսկ երբ սուլում էր Պեպոյի երգը, իմ շունչը հուզմունքից կտրվում էր:

— Էսօր աչքիս մալուլ կերևաս: Քեզ համար մի Պեպոյի երգ երգեմ, — ասում էր նա հաճախ:

Մի ամբողջ աշխարհ էր բացվում իմ հոգում, երբ նա այնքան հստակ ու սրտառուչ ոլորում էր այս վարակիչ եղանակը . ամառային Երևան, Հրաչյա Ներսիսյան, Զանգուի ձորը, Չոփուռ Արամի գիշերային ռեստորանն իր ավազանով և խլրտացող «իշխան» ձկներով: Պեպոյի ե՛րգը:

Ջինգանին մեր ճամբարից տարան որպես առողջ և լիարժեք կալանավոր, իսկ նա ետ եկավ որպես ֆիզիկական աշխատանքի անընդունակ: Ինչպես ասացինք, նա ձեռք բերեց այս բախտը խիստ թանկ վճարով: Չդիմանալով անտառային-ճմեռային ծանր աշխատանքներին, նա անզոր կատաղության մի նոպայում ձախ ձեռքը դրեց ծառաբնին և աջ ձեռքի կացինով մի հարվածով հատեց իր չորս մատները: Օրինակը վարակիչ էր . ինքնախոշտանգումն ընդունեց լայն ծավալում: Պահնորդներին օժտեցին նմաններին տեղն ու տեղը գնդակահարելու իրավունքով և, այսպիսով միայն չարիքի դեմն առան: Ջինգանի բախտը բերեց: Նրան քշեցին էտապ, և նա պատահաբար ընկավ այն ճամբարը, որտեղից նրան տարել էին, այսինքն մեզ մոտ: Ջինգոն ուրախ էր ու երջանիկ: Նա կարծես տուն էր վերադարձել:

— Ջինգոյին մեռնել չկա՛, — պնդում էր նա: — Հավլաբարի բերդի տակ Դարչոյի պաղվալում Ջինգոն հլա կախեթի վասմոյ պիտի խմի ու ցոցխալի պիտի անուշ անի . . .

Յատուկ Պոէմ

Սարսափելի գույներով էր նկարագրում Ջինգոն անտառային աշխատանքները: Սղոցով և շառաչյունով տապալվող վիթխարի կաղնիների տակ մնալն ու շունչ փչելը սովորական երևույթ էր: Անվարժությա՞ն, պատահմունքի զոհե՞ր էին նրանք, թե ինքնասպաններ . անհնարին էր ստուգելը, փաստն այն էր, որ գրեթե ամեն օր անտառային բրիգադներն աշխատանքի վայրում թողնում էին մեկ-երկու կալանավորների ջախջախված, անճանաչելի դիակներ: Հնարավոր է, որ նրանք պարզապես տգիտության զոհեր էին, նրանք, քիչ բացառությամբ, առաջին անգամն է, որ սղոց ու կացին էին վերցնում իրենց ձեռքը . փորձված անտառահատները հեշտությամբ կարող են որոշել, թե սղոցվող ծառը որ կողմն է ընկնելու, և նրանք փախչում են հակառակ կողմը: Սրանք չգիտեն, ինչպես Ջինգոն է ասում՝ «հարիֆ են», կորցնում են գլուխները, փախչում են դես ու դեն, խառնվում իրար . . . Նրանք մեծ մասամբ, Ջինդաևի պնդումով «պռաֆեսորներ են, պարտեյնի տուզեր, նախկին դիրեկտորներ, ինտելիհենցիա . . . »:

Անտառահատների ճամբարը գտնվում է խորին տայգայում, չորս կողմը անտառ է, խեղդվող, ոչ մեծ բացատում՝ ճամբարը: Միայն մի ճանապարհ կա տայգան աշխարհին կապող, այդ ճանապարհով են գալիս ու գնում էտապները, այդ ճանապարհով ամսվա ընթացքում մի քանի անգամ հոնդալով գալիս են իրար ետևից մի քանի բեռնատար մեքենաներ, անտառում պատրաստված և կալանավորների ուսերով դուրս նետված գերաններով բարձվում ու գնում: Կալանավորների ծանր աշխատանքն ավելի ծանրացնում են, դարձնում անտանելի մժեղների ամպերը: Նրանք, զգալով երևի մարդկային կենդանի շնչի ներկայությունը, հարձակվում են միլիոններով, լցվում աչք ու ականջ, կծոտում ինչ գտնում են բաց, թափանցում անգամ թանձր գուլպաներից ներս: Կալանավորները խարույկներ են վառում, ծուխ բաց թողնում, հատուկ տրված ինչ-որ գարշելի հեղուկով օծում դեմքը, ձեռները . . . Ոչինչ չի օգնում և, ընդհակառակը, նրանք ավելի են գազազում ու ծծում մարդկային առանց այն էլ սակավ արյունը: Երբ երեկոյան հավաքվում են ստուգման ու տուն դարձի, նրանց դեմքերն ուռած են լինում, արնակալած, անճանաչելի: Նրանք, հոգնած ու ջարդված, առանց հանվելու ընկնում են մերկ նառերին ու չեն կարող քնել ցավից ու հոգնությունից: Վաղ առավոտյան նրանց ոտքի են հանում նույնն սկսելու համար սկզբից . . .

Փախուստի դեպքերը սակավադեպ են, նրանք վերջանում են անհաջողությամբ: Ջինգոյի ասելով՝ ինքը երկու քրեական լոդրերի և մի քաղաքական՝ մարմնամարզության նախկին ուսուցչի հետ որոշում են փախչել: Նրանք տնտեսում են երկու-երեք օրաբաժին հաց, խաշած կարտոֆիլ, վերցնում լուցկի, դանակ, այն հույսով, որ ճանապարհին կարող են անտառային գազաններ՝ «արջից-բանից» սպանել, խորովել և ուտել . . . նշանակում են օրը, ուղղությունը, որով պիտի անհայտանան մեկ-մեկ, աննկատելի կերպով խորանում են տայգայում, իրար գտնում և . . .

Փախստականներին առաջնորդում է մարմնամարզության դասատուն: Իր պատմելով՝ նա մասնակցել է մեծ ու փոքր էքսկուրսիաների, կազմակերպել ալպինիստական արշավախմբեր և սեփական ոտներով կանգնել է Կազբեկի գագաթին: Ընդհանրապես դոնբասցի այդ երիտասարդը, Ջինգանի ասելով, երկար լեզու ուներ և սիրում էր պարծենալ:

Որոշված էր գնալ մի ուղղությամբ, առանց թեքվելու աջ ու ձախ: Ճիշտ է, ասում են տայգան անվերջ է ու անսահման, բայց ինչ էլ որ լինի, դա անջրպետ չէ և այդ անվերջ-անսահմանությունը մի վերջ ու սահման պիտի ունենա՞ թե ոչ . . . Դուրս գալով տայգայից, նրանք, պարզ է, չեն բռնի բանուկ ճանապարհներ: Նրանք կմնան տայգայում, այլապես անմիջապես կճանաչվեն, առաջին իսկ բնակավայրում կբռնվեն որպես փախած կալանավորներ և կհանձնվեն իշխանություններին: Իսկ փախածների հետ խոսակցությունը կարճ է: Կգնդակահարեն առանց դատ ու դատաստանի, հատուկ հրամանով և հրամանը կկարդան հազարավոր ճամբարների միլիոնավոր կալանավորներին, վերջում ավելացնելով . «Հրամանն ի կատար է ածված»: Բանուկ ճանապարհներից, փոքր ավաններից ոչ հեռու, խուլ տայգայում, նրանք մի տնակ կշինեն, կապրեն այնտեղ չորսով, գիշերները դուրս կգան կողոպուտի և ավարառության ու կապրեն մինչև . . . մինչև երևի ընդհանուր ներում, կամ մինչև . . . Մեծ Հայրիկի մահը . . .

Գնում են չորս փախստականները, գնում են մեկ օր, երկու օր, դոնբասցի ուսուցիչն առաջից, մյուսները՝ ետևից, գնում են կռվելով մժեղների, մացառների դեմ, գնում են, որքան իրենց թվում է, մեկ ուղղությամբ, առանց աջ ու ձախ

թեքումների, ուղղակի գլխավոր գծով: Դոնբասցի ուսուցիչը, որը քաղաքականապես գրագետ է, բացատրում է, թե ինչ է նշանակում աջ ու ձախ թեքում, թե որքան մարդիկ են զոհվել այդ թեքումների պատճառով և որ միակ փրկությունը գլխավոր գիծն է, որը տանում է անվրեպ դեպի հաղթանակ ու փրկություն: Նրանք այնքան չէին տառապում քաղցից, որքան ծարավից: Տայգայում անտառային ճահճուտներ կան, անշարժ, չհոսող ջրեր, որոնք գոյանում են երևի մեծ անձրևներից, կամ գուցե ձնհալից: Արևը չի թափանցում այնտեղ, խոնավությունը հասնում է ցրտության աստիճանին, նրանք իրենց ծարավը հագեցնում են այդ տհաճ, սակայն սառնորակ ջրերով: Չորս հոգուց միայն Ջինգանն է, որ վերցրել է իր թիթեղամանը: Երբ ջրի են հանդիպում, նա լցնում է ամանը ջրով, իհարկե, բոլորի համար: Այդ էլ մի ծանրություն . . .

Խիտ, խոնավ, դժվարանց տայգայում հանկարծ բացատներ են բացվում, շքեղ, գունագեղ բացատներ՝ ծածկված խիտ կանաչով և անանուն, վառ ծաղիկներով, լցված արևի լույսով ու ջերմությամբ: Նրանք պառկում էին կանաչների վրա, քնում, հանգստանում, խոսում «գլխավոր գծի» և իրենց հետագա կյանքի մասին ու նորից քայլում առաջ ու առաջ: Չնայած որ ուտում էին մեծ խնայողությամբ, մնալով միշտ կիսաքաղցած, հինգերորդ օրը նրանք սարսափով վերահասու եղան, որ ուտելիքը վերջանում է, իսկ իրենք այնքան են թուլացել, որ պատրաստ են դեն շպրտելու կացինների ծանրությունը:

Վեցերորդ օրը նրանց բախտը բերեց: Բացատից ոչ հեռու մի գազան էր ծանր տնքում ու թրքում: Գայլ չէր, արջ չէր, աղվես չէր, այս երեքի խառնուրդն էր: Գազանը փախչելու փորձ չկատարեց, ըստ երևույթին, չգիտեր, թե ինչ բան է մարդը և ինչի է նա ընդունակ: Երբ բարձրացավ կացինը, նա աչքերն անգամ չթարթեց: Նրանք բացատում խարույկ վառեցին, քերթեցին գազանի պսպղուն, փրչոտ մորթին, կտրեցին մի քանի կտոր և դրին խարույկին: Շուրջը տարածվեց մսի խանձահոտ, և չորս փախստականները քաղցից դողացին: Միսը նրանց թվաց չափազանց համեղ, թեև դժվար էր ծամելը: Աղ չէին վերցրել, բայց այնքան էին սովահար, որ չնկատեցին աղի բացակայությունը: Հետո չորս մասի բաժանեցին մնացած միսը, դրին տոպրակներն ու առաջ շարժվեցին:

Երրորդ թե չորրորդ օրը նրանք մսի վերջին կտորները խորովեցին, կերան ու ընկան ծանր մտքերի մեջ: Հետո՞: Ինչո՞վ է վերջանալու այս դաժան ճանապարհորդությունը: Իրենց առաջնորդի «գլխավոր գծի» վերջը չի երևում: Նրանք գաղտագողի նայում են իրար և գուշակում իրենց դեմքը . նիհարել են, մազակալել, նրանց աչքերը փայլում են անառողջ փայլով, օ՛, այո, այս այն է, ինչ կոչվում է վայրենացում:

Քրեականներից մեկը, որ կոչվում է Սոկոլ, այսինքն բազե՝ խզված ձայնով սկսում է «Տայգայի երգը», նրան հետևում է Տայֆունը: Դոնբասցին ու Ջինգաևը երգի խոսքերը չգիտեն, ձայն են պահում:

Տայգան անսահման է,
Վերջ չունի տայգան,
Տայգան գերեզման է,
Անեզր, անսահման:
— Գերեզմա՛ն իմ, գերեզման,
Անեզր, անսահման . . .

Տայգայի նման վերջ չունեն նաև ճամբարային էպոսները՝ ճամբարային բանահյուսությունը: Խլելով տողերն ու բառերը մեկ-մեկուց՝ երգում են քրեականները: Դոնբասցին ու Ջինգաևն արդեն սովորել են կրկներգը: Նրանք սկզբում շարունակում են ձայն պահել, բայց ճիշտ ժամանակին միանում են երգիչներին խոսքերով .

Գերեզմա՛ն իմ, գերեզման,
Անվերջ, անսահման . . .

Երգը վերջացավ, և նրանք զգացին իրենց ավելի խեղճացած ու անզոր, կացությունը թված ավելի ծանր ու աղետավոր, տայգան թվաց նրանց մի վիթխարի, թշնամական թակարդ ու որոգայթ, անդուռ ու անելք, և այն, ինչ օրեր առաջ թվում էր նրանց մոտ ու հնարավոր, այսօր, պարզվում է, անկարելի է ու անհնարին, ու իրենք դատապարտված են ստույգ սովամահության և կորստի:

— Գուցե մենք սխա՞լ ենք գնում, օրերի հաշիվը կորցրինք, իսկ տայգան չի վերջանում: Մի՞թե ճիշտ է, որ այս անիծված տայգան վերջ չունի, — ասես մենախոսում է Սոկոլը՝ պղտոր աչքերը հառած բացատի վրա բացված երկնքի լճին, — դուրս է գալիս, որ մենք բաց աչքերով գնում ենք դեպի մա՞հ:

— Իհարկե դժվար է, — համաձայնվում է դոնբասցին, — առանց կողմնացույցի, առանց տեղական աշխարհագրական քարտեզի: Մենք գնում ենք ուղիղ, գլխավոր գծով . . . Բայց թե ո՞ւր կտանի այդ գլխավոր գիծը . . .

Տիրում է լռություն:

Առաջինը սթափվում է Տայֆունը: Նա ոտքի է կանգնում, թափ է տալիս իրեն և ասես ցրելու համար ծանր մթնոլորտը՝ գրեթե գոռում .

— Ջոքանչի մոտ հյուր չե՛նք եկել, շարժվենք . . .

Ու շարժվում են:

Երեկոյի մոտենալը ամենից շատ տայգան է զգում: Այնտեղ, առանց այն էլ տիրող կիսախավարին հյուսվում են գորշ մալանչներ: Բայց ահա ծառերն ավելի ցանցառանում են, և առաջ գնալով՝ նրանք Ռոբինզոնի նման քարանում են տեղերում: Սղոցված ծառաբներ: Պարզ է, որ նրանք հեռու չեն բնակավայրերից: Ուրեմն . . . Իսկ եթե մարդկա՞նց հանդիպեն . . . Ուրեմն . . .

Խուլ, անսահման, անծայրածիր ու ճակատագրական թվացող տայգայից դուրս գալու հեռանկարը նրանց հոգուց վանում է ամեն երկյուղ: Նրանք արագացնում են քայլերը, գնում առաջ ու առաջ: Դոնբասցին հանկարծ կանգ է առնում:

Դուք . . . ոչինչ չլսեցի՞ք:

. . .

Գուցե ինձ թվա՞ց . . . շան հաչոց . . .

Յատուկ Դրէմ

Նրանք կանգնում և սրում են ականջները: Լռություն: Քիչ հետո, իսկապես, նրանց ականջներին հասնում է շան խուլ ու հեռավոր հաչոց: Նրանք համարյա վազելով գնում են հաչոցի ուղղությամբ: Տասը րոպե, քսան . . . Ու նրանց սարսափից մեծացած աչքերին ծառերի արանքից երևում է իրիկնային մշուշում անշարժ փռված այն ճամբարը, որից փախել էին: Արնահոտ սպանդանոցից ազատված սարսափահար անասունների նման նրանք ետ են փախչում որքան շունչ ունեն, վազում անտառի գոտով այս անգամ դեպի հարավ, առանց խորանալու տայգայում: Առաջին իսկ փոքրիկ բացատում նրանք շնչասպառ ընկան խոտերին, ասես լավ հասկանալու համար, թե ինչ պատահեց իրենց հետ և այն, ինչ պատահեց՝ իրականությո՞ւն էր, թե ծանր, անհեթեթ, անկարելի երազ:

— Ահա թե ուր բերեց մեզ քո . . . գլխավոր գիծը, — ատամների միջից ֆշշաց Սոկոլը, ընդհատ շնչելով, — դու, ի՞նչ է, դիտմա՞մբ արիր . . .

Մարմնամարզության նախկին ուսուցիչը բերանը բացեց ինչ-որ բան ասելու համար երևի, բայց հանդիպելով զզզված, մազակալած, մարդկային կերպարանքից զրկված Սոկոլի ու Տայֆունի՝ ֆիննական դաշույնի նման սառն ու սպառնական նայվածքին՝ չկարողացավ խոսել և միայն ասես մեծ դժվարությամբ մի կում օդ կուլ տվեց: Նա հիշեց վաղուց կարդացած «Ռոբինզոն Կրուզո» գրքի վայրենի մարդակերների նկարները: — Սրանք ինձ կուտեն, — անցավ նրա մտքով:

— Պարզ է, — ընկերոջ միտքը լրացրեց Տայֆունը, — իսկ հիմա նա մեզ կքնացնի, կվազի լագերը . . . էխ, դու, ի՛ժ . . . հիպպոպոդա՛մ . . .

— Ու մեզ բռնել կտա . . . Իսկ իրեն կնշանակեն բարաքի ավագ . . . հասկանալի է . . . մեզ հետ դու կվառվես, Ջինգո, նկատի ունեցիր:

(— Ես գիտեի, որ պարզապես մարդուն ամբաստանում են, — պատմում է Ջինգանը, մի նոր ծխախոտ վառելով, — գիտեի և այն, որ եթե այդ հարիֆին պաշտպան կանգնեմ, ինձ աֆարիմ չեն ասի, ձայնս կտրեցի, ի՞նչ անեի . . .)

— Այդ օրը չե՛ս տեսնի, — գոռաց Սոկոլը խռպոտ ձայնով, — ապա՛, առա՛ջ ընկի . . . կացինը դե՛ն նետիր . . .

Ջինաթափված ուսուցիչն առաջ անցավ:

Ու քայլեցին, քայլեցին քաղցած ու ծարավ, ընկնելով ու կանգնելով, լիալուսինը հաճախ գտնելով ու կորցնելով: Դոնբասցին լուռ էր, գլխիկոր, դատապարտվածի նման: Այստեղ պետք է ասել, որ եթե կար մեկը, որը փախուստի մասին էր մտածում, դա ապահովաբար Ջինգանն էր . . . Մնացած երկուսը հայհոյում էին, անիծում ու քայլում: Հետո կամաց-կամաց խաղաղվեցին և առաջին իսկ փոքրիկ բացատում պարկերի նման վար ընկան ու քնեցին մեռելային քնով: «Մի քիչ կքնեմ, ուժ կհավաքեմ, կես գիշերով կթողնեմ, — կփախչեմ», — մտածեց Ջինգանը:

Ընդունված որոշումը զրկեց նրան քնից: Երևի ծայրահեղ հոգնածության և գրգռված ջղերի պատճառած անքնության նման տանջալից բան չկա աշխարհում: Նա, հիմա պարզ է, նորից ճամբար կվերադառնա, թող վարվեն իրեն հետ ինչպես կուզեն, հարցաքննության ժամանակ չի մատնի իր ընկերներին, կասի՝ փախուստի երրորդ օրը կորցրինք իրար տայգայում, հավանաբար նրանք գազանների կերակուր դարձան . . . Այո, այսպես կասի: Սովալլուկ գազանների նման՝ խոխոռոցով ու մրթմրթոցով քնած են Սոկոլն ու Տայֆունը: Լուսնալույսի տակ սարսափելի են նրանց դեմքերը, մարմնամարզության ուսուցիչն էլ կորցրել է մարդկային դեմքը, բայց նա ավելի նման է այն տնքացող, անանուն գազանին, որին օրեր առաջ հոշոտեցին ու կերան: Հիվանդ գազանի նման նա էլ տնքում է:

Ջինգանը մտածեց, որ փախչելու համար գուցե ամենահարմար օրն ու ժամն է: Նա շարժվեց տեղում, անգամ փորձեց կանգնել, բայց զգաց, որ չի կարող: Ամբողջ մարմինը ցավում է, իսկ ոտներն իրեն չեն ենթարկվում: Պարզ է, որ պիտի հետաձգվի վաղվան, իսկ Ջինգանն ի՞նչ իմանա՝ ինչ կբերի վաղվա օրը:

Լուսաբացին միայն նրա քունը տարավ: Քնեց աներազ, խոր քնով: Նա զարթնեց ինչ-որ ձայներից և դեմքի ծակծկոցից: Արևն էր կծում և հետո ծուխն է պնչերը խտուտ տալիս: Տայֆունն ու Սոկոլը նախաճաշում էին և լուռ էին, անգամ չարացած: Բացատից քիչ հեռու ընկած էին մարմնամարզության ուսուցչի ցնցոտիները: Հետո Տայֆունը պառկում է կոնակին, կարմրած աչքերը հառում երկնքի կապույտ լճի մի կտորին և անհասցե՝ մայր է հայհոյում: Այդպես են

նրանք, մայր են հայհոյում, երբ ծանր է կացությունը, մայր են հայհոյում երկարաձիգ ու երազուն՝ երբ մի լավ բան են հիշում, մայր են հայհոյում ձանձրույթից, երկու եղբայրներ երկար անջատումից հետո, երբ իրար են հանդիպում, համբուրվում են, ծեծում իրար ուսը և ուրախությունից մայր են հայհոյում, հենց որ առավոտյան աչքը բացում են, երբ շուտ են զարթնում կամ ուշ, կամ զարթնում են ճիշտ իրենց ուզած ժամանակին, միևնույն է, մայր են հայհոյում: Հայհոյանք լինելուց դադարել է նրանց այդ ծանր հայհոյանքը և վերածվել տրամադրություններ, հոգեվիճակներ արտահայտելու դիպուկ միջոցի, ու մայր հայհոյելով նրանք արտահայտում են ցասում ու քնքշություն, տարակուսանք և ափսոսանք, հրճվանք ու դժգոհություն, աղաչանք ու հիացում: Այս անգամ դառնությամբ, խորին դառնությամբ էր ծանրացած նրա հիշողը: Նա շուռ եկավ փորի վրա, գլուխը թաղեց խոտերում և պարզած երկու ձեռքերի տակ ընկած խոտը պոճկեց ու տրորեց: Նա փորձեց մինչև անգամ երգել հայտնի «Կալանավորի ողբը»:

Իմ նեղ խցում և ո՛չ մի շող,
Այնտեղ մութ է անծիր,
Օ՛, մա՛յր իմ հող, օ՛, մա՛յր իմ հող,
Ինչո՞ւ ինձ ծնեցիր:
Դարձրին ինձ բանդիտ ու գող,
Թույնով ինձ սնեցին,
Օ՛, մա՛յր իմ հող, օ՛, մա՛յր իմ հող,
Ինչո՞ւ ինձ ծնեցիր . . .

— Լա՛վ ես ոռնում, — ընդհատեց նրա երգը Սոկոլը, — ոնց որ Մեծ թատրոնի երգիչ . . . ես էլ քեզ հետ կերգեի, բայց ոչ սիրտ կա, ոչ ժամանակ . . . վե՛ր կաց, շալակենք մեր մեղքն ու գնանք, կորչենք . . .

— . . . Ու շարժվում ենք՝ նորից աշխատելով չկորցնել ուղղությունը, աշխատելով հեռանալ մեր ճամբարից և միաժամանակ չխորանալ տայգայում, քայլում ենք՝ մի քանի օրով ապահովված, բայց ծանրացած, անասելի

ծանրացած . . .

— Օրվա ընթացքում, քայլելիս, ես մի անգամ էլ ծանր ու թեթև արի դրությունը և եկա այն համոզման, որ իմ փախչելու որոշումը ճիշտ է ու ենթակա չէ բեկման: Երկու անգամ երկու = չորսի պես պարզ է, որ մի քանի օր հետո նրանք երկուսով պիտի չափեն տայգայի լայնքն ու երկայնքը ու խառույկ վառեն, նախաճաշեն կամ ճաշեն երկուսո՛վ: Ջինգո, գլխիդ ճարը տես: Գլխիդ ճարը տես, Ջինգո, հաշիվները սխալ դուրս եկան, — տնակ շինել անտառում և՝ որսով ու թալանով ապրելու ծրագիրը ծրագիր չէ, այլ մանկական հեքիաթ: Վերադարձի՛ր ճամբար, Ջինգո, վերադարձի՛ր ինչպես անառակ որդին, ու տար քո խաչն ինչպես բոլորն են տանում ու եթե վիճակված է մեռնել առանց Հավլաբարի բերդի տակի պադվալում քեփ անելու, մեռի՛ր լոթիանա, տղամարդու նման:

— Ի՞նչ գլուխներդ ցավեցնեմ, — պատմում էր Ջինգոն, —այդ գիշե՛ր ես թողեցի նրանց: Խոր քնած էին և եթե ես անգամ բարձրաձայն «մնաք բարով» գոռայի, մեկ է, չէին լսի: Ես բռնեցի մոտավորապես՝ տարաբախտ ուսուցչի ասածի պես՝ գլխավոր գիծը, որը տանում էր ճամբար: Ոչինչ, չվերցրի հետս ու կարծես թեթևացած՝ քայլեցի առաջ ու առաջ: Լուսաբաց էր, երբ դուրս եկա տայգայից, ընկա այն բացատը, ուր մի քանի օր աշխատել էր մեր բրիգադը: Հեռվից ականջիս հասավ բեռնատար մեքենայի աղմուկը, հետո շան հաչոց: Իմ սիրտը լցվեց ուրախությամբ, ասես մոտեցել էի իմ հորենական տանը . . .

Այս էր Ջինգանի փախուստի պատմությունը: Աշոտ դայու կարծիքով՝ Ջինգանի ջրով փլավ գցել չի կարելի, նրա ասածների և արածների ո՛չ լավին պետք է հավատալ, ո՛չ վատին: Փախուստի նման ծանր դեպքեր եղել են, իհարկե, անհավատալի ոչինչ չկա, բայց նա եղե՞լ է չորսից մեկը, թե՞ ամբողջ պատմությունը լսել է ուրիշներից և իրեն է վերագրում: Ինքը՝ Ջինգանը հիմք է տվել նման կասկածների: Մի անգամ նա պատմել է, թե ինչպես պահակներն ընկալեցին չորսի փախուստը: Նրա պատմելով, ճաշի դադարից հետո, երբ հաշվում են կալանավորներին և տեսնում, որ չորս հոգի չկան, նրանք հրամայում են թողնել աշխատանքը և կալանավորներին շնչասպառ անելով, վազքով հասցնում ճամբար և հայտնում փախուստի մասին: Ոտքի է կանգնում ողջ պահակախումբը և կատաղած խուզարկու շներով նետվում տայգա: Հարց է

ծագում, եթե Ջինգաևը եղել է «գործող ճակատում», այսինքն փախչողների հետ, որտեղի՞ց են նրան հայտնի «թիկունքային» այս մանրամասնությունները, որոնց մասին նույնպես նա պատմում է որպես ականատես: Հակասությունները շատ են Ջինգաևի պատմածների մեջ: Մեզ պատմելիս երդվեց, որ նա չի մոտեցել մարդկային մսին, բայց քրեական կալանավորներին հավատացրել է, որ մարմնամարզության դասատուն այնքան երկար լեզու է ունեցել, որ երեքով հազիվ կարողացել են ուտել, վերջացնել . . . Որո՞ւն հավատալ: Չէ՛, ճիշտ, շատ ճիշտ է գնահատել ինքն իրեն Ջինգաևը .

— Ես ի՞նչ քաղաքական եմ . . . ես ջիգա՛ն եմ, ջիգա՛ն . . .

Յատուկ Պոէմ